ՀԱՅՈՑ ԱՐԾՎԱԲԵՐԴԸ

ՂԱՐԱԲԱՂ. ՊԱՅՔԱՐԻ ՀՈՐՍ ՏԱՐԻ

Արցախը մեր էպոսի Փոքր Մհերն է՝ պատմական անարդարության հետ երբեք չհաշտվող: Նա նման է մեր էպոսի այն զարմանահրաշ առվին, որն ի զորու է կտրելու վարարաջուր ու պղտոր գետը: Եվ կկտրի, պիտի կտրի, այլապես շատ գետեր, առուներ և աղբյուրներ կլանած հարևան գետ-վիշապը Արցախն էլ կփորձի մարսել վերջնականապես: Եթե կարողանա՝ կմարսի: Սակայն, ինչպես պատմությունն է վկայում, չի կարող: Ղարաբաղցին գիտի իր հոգևոր-բարոյական բարձր կերպարի մասին: Հայոց արծվաբերդում հայոց արծիվներ պիտի ապրեն միայն, ինչ էլ որ լինի:

Ադրբեջանը փաստորեն ստեղծել է իր ազգային բանակը: Նրան են հանձնվել 4-րդ բանակի ուղղաթիռային էսկադրիլիան, թիկունքային զորամիավորումների մեծ մասը: Մեր օրերի լեզվով ասած՝ լուծվում է կասպիական նավատորմիկը Ադրբեջանին սեփականաշնորհելու հարցը: Եվ այս վտանգավոր համայնապատկերի վրա դժվար է հասկանալ մարշալ Շապոշնիկովի այն հայտարարությունը, թե՝ քանի դեռ չի լուծվել Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտը, չի կարելի թույլ տալ, որ այդ հանրապետություններում ստեղծվեն ազգային բանակներ: Շուշիից՝ հայերի կառուցած անառիկ բերդաքաղաքից, գիշեր-ցերեկ «Գրադ» կայանքներից հրետակոծվում է Ստեփանակերտը՝ նպատակ ունենալով կործանել քաղաքը, զանգվածաբար ոչնչացնել խաղաղ հայ բնակչությանը և խուճապ առաջացնել ամբողջ լեռնաշխարհում: Միաժամանակ հայկական շրջկենտրոններն ու գյուղերը ենթարկվում են տանկային և հզոր ուղղաթիռային գրոհների: Բողոքներ են գնում միջազգային ատյաններ, ՄԱԿ: Արցախի հարցը միջազգայնացվել է: Բայց Ադրբեջանի թիկունքին Թուրքիան է կանգնած՝ Անդրկովկասում խաղաղարարի ու հաշտարարի հավակնություններ ունեցող ցեղասպան մի երկիր:

Ղարաբաղցին լավ գիտի, որ եթե ազգային-ազատագրական այս անողոք պայքարում պարտվի, երկու ելք է ունենալու՝ կամ ապրել ծնկաչոք, կամ լքել իր պապերի հողը: Առաջինը նրա համար մահից էլ վատթար է, երկրորդը՝ անհնարին: Ղարաբաղցին իր դժվարին բախտով երջանիկ կարող է լինել միայն և միայն հայրենի լեռների՝ աստծո փեշից կախված Քիրսի ու Մռավի, Դիզափայտի ու Սահունասարի հայացքի ներքո:

Լեռնային Ղարաբաղում իսկական պատերազմ է: Գրավելով Մալիբեյլու գյուղը՝ գիշեր-ցերեկ Ստեփանակերտը հրթիռակոծող ադրբեջանական բանակի կարևոր կրակակետերից մեկը, հայ ազատամարտիկները մեծահոգաբար թույլ տվին անվնաս հեռանալու գյուղում մնացած ադրբեջանցի բնակիչներին: Բայց ահա Շահումյանում Էրքեջի, Բուզլուխի և Մանաշիդի համար մղված վերջին մարտերի ժամանակ ծանր վիրավորված երկու հայերի իրենց ձեռքը գցելով, ադրբեջանցի վայրագները այրեցին նրանց: Իսկ Արցախում մղվող կռիվներում օրերս սպանված օմոնականներին հարևան կեղծարարները մոսկովյան հեռուստաէկրանից ներկայացրին որպես հայերի կողմից անգթորեն դանակահարված, խեղճ ու կրակ, անզեն, անպաշտպան, խաղաղ ադրբեջանցիների: Գայլը ոռնում է ցավից, քանի որ լեռներում նրա հետ մենամարտի բռնված հովիվը մահակով փշրել է արնոտ երախով գիշատչի մի քանի ժանիք: Բայց դա քիչ է: Երբևէ զսպաշապիկ հագցվելո՞ւ է նրա գայլային ախորժակին: Կենաց-մահու կռիվ է գնում Ղարաբաղում: Թշնամու գնդակների տարափի, հրթիռների և արկերի շառաչի տակ ծնվել ու ձևավորվում-ամրապնդվում է Լեռնային Ղարաբաղի պետականությունը: Մեծ զոհողությունների գնով: Արցախցին ապավինել է հայրենի լեռներին, իսկ աներեր հույսը կապել իր մայր ժողովրդի հետ:

Գ. ՌՈՒԲԻՆՅԱՆ